# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առիթով:

Աղոթող ենք առ Աստված մեր Մեծ Հայրենիքի անսասանության, սովետական բազմազգ ժողովուրդների բարօրության և ամբողջ աշխարհում կայուն խաղաղության համար:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առիթով հաճեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և ջերմագին բարեմաղթությունները:

Թող մեր Մայր Հայրենիքը աճի ու ծաղկի խաղաղության պայմաններում, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում: Ձեզ և մեր հայրենի կառավարության անդամներին մաղթում ենք քաջառողջություն և հաջողություն հայրենաշեն աշխատանքում:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ա. ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հաճեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքներն ու լավագույն բարեմաղթությունները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առիթով անձամբ Ձեզ և Խորհրդի բոլոր անդամներին:

Աղոթող ենք առ Աստված սովետական ժողովուրդների բարօրության, ամբողջ աշխարհի խաղաղության և մեր Մեծ Հայրենիքի ծաղկման համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սրտագինս ողջունում ու շնորհավորում ենք Ձեզ և պատվարժան խորհրդիդ բոլոր անդամներին Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առիթով:

Մաղթում ենք, որ Տերը միշտ անսասան պահի մեր փառապանծ Հայրենիքը և խաղաղ ու բարգավաճ՝ մեր շինարար ժողովրդին:

Սիրով և օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք, խնդրում եմ, Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահության և իմ շնորհակալությունը այն շնորհավորանքի համար, որ Դուք հղել եք մեզ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առթիվ:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

10 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ

---

Հաճեցեք ընդունել Սովետական Հայաստանի կառավարության և իմ շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

9 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ

---

Ձերդ Վեհափառություն.

Հաճույքով ստացանք Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 44-րդ տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագիրը:

Հաճեցեք ընդունել մեր անկեղծ շնորհակալությունները:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

9 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ